ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՈՀՀ- 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ք. Երևան <<20>> դեկտեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի նախագահ Վահագն Գևորգյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Տավուշ>> ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության գործադիր տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող Ռոման Ահարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 16-ի << Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 2088-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ոռոգման համակարգի առողջացում 1004 ծրագրի <<Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգմանը>> 12003 միջոցառման 04.02.04.23 տնտեսագիտական դասակարգման <<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> 4657 հոդվածով Ընկերությանը հատկացնել 4 810 000 դրամ գումար:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Ընկերության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Ընկերությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Ընկերությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Ընկերությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Ընկերությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Ընկերությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Կոմիտեն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Ընկերությանը:

2.4. Ընկերությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Կոմիտեի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Ընկերությունը պարտավորվում է անվճար՝ Կոմիտեի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Կոմիտեն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի և(կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ընկերությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը եւ ժամկետները

4.1. Ընկերությանը վճարումները կատարվում են Կոմիտե ներկայացվող Կոմիտե ներկայացվող կատարողական հաշվետվությունների հիման վրա՝ միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը պարտավորվում է Կոմիտեին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Ընկերությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Ընկերությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	**Ընկերություն**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան Վարդանանց, 13ա ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն h/h 900011029767 ՀՎՀՀ 02555816 ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահ	Հասցեն՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, Գետափնյա 23 <<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Իջևան>> մասնաճյուղ h/h 2476103925470000 ՀՎՀՀ 07614735 <<Տավուշ>> ՋՕԸ գործադիր տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող
_____ Վ. Գևորգյան	_____ Ռ. Ահարոնյանի

Հավելված
2021 թ. 12 20 -ին
կնքված N ԴՈՀՀ- 1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը
1	Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգմանը	<<Հեյթուն>> N 1 ջ/կայանի ճնշումային խողովակաշարի նորոգում	Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգման նպատակով իրականացվող միջոցառումներին	Ոռոգման ծառայություն իրականացնող ընկերությունների կողմից շահագործվող ոռոգման համակարգերի անխափան շահագործում, ջրօգտագործողներին ջրի պահանջարկի ապահովում և ստանձած պայմանագրային պարտավորությունների արդյունավետ կատարում	30.12.2021թ.	4 810 000
ԸՆԴԱՄԵՆԸ						**4 810 000**